ՇԱԲԱԹ 28 ՓԵՏՐՎԱՐԻ 1881

ՇԱԲԱԹ 28 ՓԵՏՐՎԱՐԻ

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի և տօն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարները խմբագրատանը 5 կոպ.

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիրակէ և տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ։

Ստորագրողները դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ ред. газеты «Мегу Айастани», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani», à Tiflis (Caucase).

Խմբագրութեան ուղղած թէ յօդուածները և թէ նամակները պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ և հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել և կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները և պահում է երկու ամիս մինչև ցպահանջ։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 1½ կոպէկ։

Յայտարարութիւնները ընդունվում են պ. Բ. Շահվերդեանի պավիլիօնում։

Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

№ 27 ՔՍԱՆԵՒՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 27

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Կ. Պօլսի մի քանի թղթակցութեանց մասին։
Ազգային.—Թղթակցութիւն Մոսկուայից։
Քաղաքական.—Արևելքը պատկանում է արևելցիներին.—«Порядокъ» լրագրի թղթակցութիւնը Կ. Պօլսից.—Քաղաքական լուրեր։
«Մեղուի» հեռագրներ.
Մանր լուրեր.
Յայտարարութիւններ.
Ֆելիէտօն.

ԹԻՖԼԻՍ, 28 ՓԵՏՐՎԱՐԻ 1881 Թ.

Հայ լրագիրներում հրատարակվեցաւ ռուսաց «Порядокъ» լրագրի թղթակցութիւնը Կ. Պօլսից, որոյ մէջ նկարագրվում է խօսակցութիւնը մի յայնի հայ Ապրօ էֆէնդիի հետ։ Այս խօսակցութեան մէջ յայնը հայլին ուզում է հասկացնել, որ տաճկահայերի միակ յոյսը պէտք է լինի իրանց վերայ և ապստամբութեամբ պէտք է ձեռք բերեն իրանց ցանկացածը։

Մենք թէև չենք հաւատում պ. թղթակցի հաղորդած խօսակցութեան յայնի և հայ էֆէնդիի մէջ և այդ թղթակցութիւնն էլ դնում ենք ինչպէս այնպիսի թղթակցութեանց և լուրերի, որոնք երբեմն հրատարակվեցան մի քանի ռուս լրագիրներում, և որոնց նայելով արդէն բոլոր Տաճկահայաստանը ապստամբութեան մէջ էր, Վանը պաշարած էր և մի քանի օրից անշուշտ առնվելու էր ու տաճիկները հալածված Վասպուրականից և այլն և այլն։ Բայց հարկ ենք համարում այդպիսի թղթակցութեանց մասին մի քանի նկատմունք անել։ Թղթակիցները կարող են լրագիրը հետաքրքրական անելու, ընթերցողաց ուշքը գրաւելու, նոցա կրքերը շարժելու համար, մտացածին նիւթեր հնարել բերել. բայց շատ անխոհեմ գործ ենք համարում մենք այսպիսի դէպքում անձանց անուններ տալը, որովհետև տաճկական կառավարութիւնը կարող է այդպիսեաց հալածել իւր տեղն և անմեղ անձինք շատ-անգամ կարող են զոհվել։ Ի՞նչ կարիք կայ անշուշտ յիշել, թէ Կիրակոս Գրիգորեանի հետ այս է խօսել, Ապրօ էֆէնդին յանի հետ այս ինչ խօսակցութիւնն է ունեցել, կամ այս ինչ անձինք ընկերութիւն են կազմել այս ինչ գործի համար, որ տէրութեան հետապնդութեան և հալածանաց պիտի ենթարկվի։ Այսպիսի թղթակցութիւնք ոչ միայն գործին օգուտ չեն տալ, այլ և կ'վնասեն անձանց, որոնք պատուաւոր և օրինաւոր ճանապարհով կարող էին օգտաւէտ լինել, առանց ենթարկվելու հալածանաց։ Գուցէ այդ ձևը անձանց փառասիրութիւնը շողոքորթելու համար է գործ դրվում. բայց մոռանալու է, որ այդ մի տեսակ մատնութիւն է դուրս գալիս մի կասկածոտ կառավարութեան առաջ, որ առիթ է որոնում այս և այն հային հալածելու։ Ի՞նչ կարիք կայ անձանց յիշել, երբ կարելի էր բաւականանալ միայն իրողութիւնը հաղորդելով, այն և ամենայն զգուշութեամբ. ժամանակին պատմութիւնը կը գնահատէ ամեն անձնաւորութեան գործունէութիւնը, չի մոռանալ ոչ ոքին. անշուշտ չի մոռանալ և այդ տեսակ կամայ թէ ակամայ մատնիչ թղթակիցներին էլ։

ԱԶԳԱՅԻՆ

ՄՈՍԿՎԱ

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)
6 յունուարի.

«Մշակ» լրագրի անցեալ տարուայ 228 և 230 համարներում լոյս տեսան Մոսկվայից հաղորդած երկու լուր—բոլորովին սխալ և հեռի ճշմարտութիւնից։—Լուրերից մէկը հաղորդում է թէ՝ «Մոսկուայի հայոց հանգանակութիւնը յօգուտ սովելոց յետաձգեցաւ նորա համար, որ այստեղի հասարակութեան անդամք սպասում են Ներսէս պատրիարքից առանձին հրաւէրներ ստանալ՝ ժողովարարութիւնը սկըսելու… և այլն, միւսը թէ՝ հանգանակութեան յետաձգուելու պատճառը այն է, որ չ'կայ ընդունակ մարդ, որ գործեր… և այլն։

Նախ՝ Մոսկուայի հայք երբէք ո՛չինչ հրաւէրների կամ հրովարտակների Ներսէս պատրիարքից կամ այլ անձինքներից չեն սպասած և չեն սպասում հանգանակութիւնը սկըսելու համար, այդ սուտ է և պոչաւոր սուտ, և երկրորդ՝—որքան յայտնի է՝ նոքա կարիք չեն տեսնում որոնել ընդունակ մարդիկ հանգանակութեան համար, քանի որ մինչև ցայժմ կային և կան այդպիսի անձինք, որք գործում են, քանի որ տասնեակ ժողովարարութիւններ ամենայաջող կերպիւ են կատարուել դոյն իսկ անձանց անմիջական ձեռնտուութեամբ։ Ուստի համարձակում ենք ասել՝ որ յիշեալ լուրերը ուղարկող պարոնայք աւելի քան անխոհեմ են վարուել՝ սուտ ու սխալ տեղեկութեանց հետ ի միասին անհիմն և անտեղի բարբաջանք հաղորդելով հայ լրագիրներին և այսպէս թէ պղտորելով ընթերցող հասարակութեան միտքը և թէ վնաս պատճառելով հանգանակութեան գործին—թէև գուցէ հակառակ իւ-

---

ՖԵԼԻԷՏՕՆ

Եկան մեծ պասի օրերը, հազիւ-հազ բացվեցան եկեղեցեաց դռները, որոնք ամբողջ տարին գրեթէ փակ են հայ ժողովրդեան մեծամասնութեան համար։ Տարակոյս չ'կայ, որ մեծ պասը կ'չորացնէ սնահաւատութեամբ եկեղեցեաց դըռների կամարները, մաշել կ'տայ նոյն չէմքերը—բայց արդեօք խելքի կ'բերէ հայ ժողովուրդն, զղջալ կ'տայ սրան իւր մեղքերը, ոչ ևս գործելու վճռականութեամբ, թէ մեծ պասի անցնելու ու զատկի գալու հետ էլի նա կ'ընկնի նոյն դրութեան մէջ, նոյն անտարբերութեան մէջ, նոյն յանցանաց մէջ։

Հայ ժողովուրդ, մի՛ նեղանալ, մի՛ վըշտանալ ճշմարտութիւն լսելուց, քո օգուտը ճանաչելուց, վնասից հեռանալուց։ Դու յանցաւոր ես, դու պէտք է զղջաս ու քաւես քո յանցանքներդ, եթէ ուզում ես, որ լաւ երթան գործքերդ և քեզնից չնորհակալ լինին քո ապագայ սերունդներդ։ Նայիր այժմ եմ քեզ ասում մի քանի խօսք, որովհետև քո գլուխդ ազատ է գինու գոլորշիից, շուայտութեան և զուարճութեան հոգսերից—մեծ պաս է, զղջման և ապաշխարութեան ժամանակ է և դու միայն սովորութեամբ կեդրոնացրած ես քո մտածմունքներդ քո չար և բարի գործերիդ վերայ, խորհում ես, քննում ես քեզ և ինքդ քեզ հաշիւ տալիս, յիշելով այն դատաւորին, որ ամենայն բանի անաչառութեամբ դատում է և իւր ողորմածութեան հետ խիստ է, խիստ է աւելի քո հասարակական յանցանաց համար։

Ի՞նչ են քո հասարակական յանցանքներդ. ահա քեզ մի առ մի թուեմ և դու խորհիր և հոգա։

Հայ ժողովուրդ Թիֆլիզի, աչքդ դըցիր քո եկեղեցեաց վերայ, ուշք դարձրու նոցա դրութեան, տես թէ ինչ վիճակի մէջ են։ Դու մօտ քառասուն հազարից բաղկացած հայ հասարակութիւն ես, քսանից աւելի եկեղեցի ունիս, որոնց իւրաքանչիւրին մօտ 2,000 հոգի կ'ընկնի—բայց երբ տեսար նոցա մէջ գէթ 20-ական հոգի, բացի մեծ պասին և մեծ տօներին։ Նոքա միշտ դատարկ են, որովհետև մեր սրտերը դատարկ են բարեպաշտութեան զգացմունքներից. միթէ սա պէտք է լինի հայ ժողովրդեան բարոյական արժանաւորութիւնը։

Հայ ժողովուրդ Թիֆլիզի, քսանից աւելի եկեղեցիք ունիս, և ոչ մէկը բարեկարգ ու բարեզարդ ունիս։ Մէկն է հընացած, միւսը գլխից մինչև հիմքը ճեղքված, երրորդը քայքայված և այլ մի քանիսը կիսաչէն թողած—միթէ սըրանից էլ աւելի մեծ հասարակական յանցանք կ'լինի, միթէ սրանից էլ աւելի մեծ մեղադրանք կ'լինի։ Ես չեմ յիշում քեզ քո անտարբերութիւնդ դէպի քո եկեղեցիների դրամական հաշիւները, քո նիւթական նշանաւոր կարուստներդ, որովհետև դու վատնելու սովոր ես, խնայելու և չափաւորութեամբ վարվելու սովոր չես։ Տես քո տաճարներդ անպաճոյճ են, եկեղեցականներդ մուրացկան են և իրանց պաշտօնին մեծ մասամբ անյարմար են։

Թիֆլիզի հայ ժողովուրդ, շուրջդ նայիր, աչքդ քո ազգային դպրոցներիդ վերայ դարձրու և տես ու մի ամաչիր, թէ կարող ես, թէ խիղճ ունիս։ Դոքա քո ապագայ երջանկութեան աղբիւրներն են, քո ապագայ սերնդից, քո զաւակացդ բարոյական և մտաւոր մկրտութեան աւազաններն են, բայց ամենքն էլ աւերակ և բրիչակ են, ամաչում եմ ասելու թէ ինչի նման են։ Պատերը կեղտոտ ու ծեփը վայր եկած, յատակները փչացած կամ բոլորովին հող, դռներն ու պատուհանները կոտրած, ամեն տեղ անմաքրութիւն, աղքատութիւն, [illegible] պակասութիւն, [illegible], [illegible] և այլ ամեն պիտոյքների, որ անհրաժեշտ են։ Ահա սա է քո ապագայ երջանկութեանց աղբիւրների վիճակը—միթէ կարծում ես պղտոր աղբիւրից մաքուր ջուր խմել կարող է քո սերունդը։—Ոչ, այդ անկարելի է։ Միթէ սրանից էլ մեծ յանցանք կ'լինի մի հասարակութեան համար։

Բայց այժմ Թիֆլիզի հայ հասարակութիւն, դարձրու աչքդ այժմ քո կլուբներիդ և զուարճութեանց տեղերի վրայ, տես նորա ձոխութիւնը, նորա չքեղութիւնն ու [illegible], նորա [illegible] մաքուր և ձոխ են, [illegible] դպրոցներից [illegible], շուայտութեան ու զեղխութեան համար առատաձեռն ես և բարօրութեան համար գծուծ և ժլատ ես։ Ահա քո [illegible] մեծ հասարակական յանցանքը, եթէ կամենում ես [illegible]։

⁂

Թիֆլիզի հայ ժողովուրդ, Թատրոն ունիս դու ազգային, որ' մեծամեծ օգուտներ է քեզ խոստանում ապագայի. Ինչ է նորա վիճակը ներկայիս, ինչով է բեանց կամքը:—Հանգամանկութեան գործը շատ փափուկ և դժուարին գործ է. հաղորդելով զանազան լուրեր դորա մասին՝ պէտք է զգոյշ լինել անպէտք և անխոհեմ ֆրազներից, որք ոչինչ օգուտ չեն կարող բերել ընդհանուր գործին՝ բացի վնասից:

Ահաւասիկ ցանկալի էր, որ «ունքը շինելու տեղ՝ աչքը քօռացնելը» ազգային առածը՝ գոնէ հասարակական խնդիրների վերաբերութեամբ՝ ամենևին տեղ չունենար մեր լրագրների մէջ:

—Մ:—

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐԵՒԵԼՔԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ԱՐԵՒԵԼՑԻՆԵՐԻՆ.

Եւրոպայի քաղաքականութեան արդի դրութիւնից մենք տեսնում ենք, որ մեծ պետութիւնները ցանկանում են և աշխատում պահպանել խաղաղութիւնը արևելքում: Մեծ պետութիւնները իրանց մէջ համաձայն, միջամտում են Թիւրք—յունական վէճին և դորա համար անելի բանակցութեանց մէջ ընդհանուր համաձայնութեամբ իւր վերայ է առել և կատարում է արդէն առաջնորդողի դերը գերմանիայի ներկայացուցիչ Բ. Դրան մօտ կոմս Հացֆէլդը: Ուրեմն իշխան Բիզմարկը ինչպէս Բերլինի կօնգրէսում այս անգամ ևս իրան է պահել առաջնորդողի, միջնորդի դերը յունական խնդրում: Բիզմարկը կամենում է, որ արևելքում պատերազմ չլինի: Այդ աւելի հաստատւում է կայսըր Վիլհէլմի գահական ճառից, որի մէջ կայսրը յիշում էր մեծ պետութիւնների մէջ կայացած համաձայնութեան գոյութիւնը յունական խնդրի վերաբերմամբ իբրև գրաւական խաղաղութեան չխանգարուելուն:

Եթէ Թիւրքերի և յոյների մէջ այնուամենայնիւ պատերազմ բացուի, կայսրը չէ կամենում թոյլ տալ, որ պատերազմը տեղական սահմաններից դուրս գայ և տարածուի Բալկան թերակղզու միւս մասերում: Բայց արդեօք կարելի՞ է այդ, հարցնում ենք մենք, քանի որ օսմանեան պետութիւնը մունջ խռովութեան մէջն է. ամեն կողմից բողոք, անբաւականութիւն օսմանեան պետութեան հպատակ ազգերից, բաւական է մէկ կայծ, որ Աբդուլ-Համիդի միապետութիւնը հրդեհէր: Զարմանալի է Եւրոպայի վարմունքը Թիւրքիայի հետ: Եւրոպան Թիւրքիայի հետ ունեցած կամ ունենալու քաղաքական բանակցութեանց մէջ աշխատում է պետութեան ինքնուրոյնութեան, անկախութեան սկզբունքը անխախտ պահել: Նա մոռանում է, որ անթիւ են օրինակները անցեալից, որոնք մեղանչեցին արդէն այդ սկզբունքի դէմ: Թիւրքիայի վերաբերմամբ անկախութեան սկզբունքը վաղուց է որ մի ցնորք է, աւելի ոչինչ: Եւ ցաւալին այն է, որ դորա պատճառը ինքը Թիւրք կառավարութիւնն է: Օսմանեան պետութիւնը եւրոպական պետութիւնների ընտանիքում ընդունելով՝ կառավարութիւնը ժամանակի հոգւոյն, պահանջներին բոլորովին խուլ մնաց, ժողովրդի, հպատակ ազգերի արդար, իրաւացի պահանջները չլսեց և իւր բոլորովին անքաղաքական վարմունքով ստիպեց դոցա իւրեանց երեսը դարձնելու Եւրոպային: Թիւրք պետութեան պաշտօնեաները, որոնք ճարպիկ քաղաքագէտներ են, բայց անշնորհք և անհեռատես պետական անձինք, բառի բուն նշանակութեամբ և զուրկ հայրենասիրութիւնից, չըհասկանալով պետութեան իսկական շահերը, կուրացած ցեղական և անձնական կրքերից—չէին տեսնում, որ հպատակ ազգերին նեղացնելով, հալածելով՝ իրանք են իրանց ձեռքով ոչնչացնում պետութեան գոյութեան, բարգաւաճման համար հարկաւոր սիւնը: Արդարև ինչպէս է ներկայանում Թիւրքիան մեր առաջ: Տգիտութեան խաւարի մէջ ընկղմած, նիւթականապէս և բարոյապէս ընկած մի երկիր, որի բնակիչները առանց մի որ և է բարոյական կապ ճանաչելու իրանց մէջ (գոնեա պետութեան գաղափարը միացնէր դոցա), ամէնքն էլ ամենքի դէմ, կառավարութիւնը ինքը թշնամի—լսեցէք—ժողովուրդին, կառավարողների և կառավարեալների մէջ յարատև կասկածանք և հակառակութիւն....: Կամայ թէ ակամայ ընկնելով այդ վիճակի մէջ՝ Թիւրք կառավարութիւնը դիմում է վաղուց փորձած և միշտ վատ հետևանքներ ունեցած միջոցին: Նա իւր իշխանութիւնը ձեռքին պահելու համար, հետևում է «բաժանեա զի տիրեսցես» առածին, հպատակ ազգերը միմեանցից բաժանելով և միմեանց դէմ կանգնեցնելով: Թիւրքիան այժմ նման է նենգ առևտրականին, որ զանազան հանգամանքներից ըստիպուած չէ կամենում վճարել պարտատէրերին: Դորա համար առևտրականը իւր կարողութիւնը բաժանում է իւր գործակատարների, բարեկամների մէջ, թաքցնում է ամեն բան. բայց սովորաբար շատ թէ քիչ պարտատէրերը իւրեանց մասը տանում են, իսկ գործակատարները և բարեկամները ոչինչ յետ չեն դարձնում նորան, դեռ աւելի պահանջող են հանդիսանում. առևտրական ամեն բանից, կարողութիւնից զրկուած, վերջն էլ կորցնում է ապագայ գործունէութեան համար: Թիւրքիան չէր կամենում վճարել իւր պարտքը ղարադաղցիներին և դոցա համար ստեղծեց ալբանական միութիւնը (լիգա), բայց յայտնի է, որ Ղարադաղը իրան հասանելիքը տարաւ, իսկ թէ Թիւրք կառավարութիւնը ինչպէս է ազատւում ալբանացիներից — այդ դեռ կը տեսնենք Թիւրքիան չէ կամենում իւր ամենահաւատարիմ, հլու, պիտանի հպատակ ազգի—հայերի արդար և համեստ պահանջները կատարել, դորա համար ստեղծել է քիւրդական միութիւնը, և ում դէմ—հայերի, որոնք այնչափ կարևոր են Համիդի գահի ամրութեան համար, որչափ Աւստրիայի գերմանական մասը Հաբսբուրգի տան համար: Դորանով հայոց խնդիրը չի ոչնչանալ, բայց թէ քիւրդերից ինչպէս պիտի ազատուի Թիւրքիան, այդ էլ կ՛տեսնենք: Երևի ասորիների դէմ կ՛լինի արաբական միութիւնը և այլն: Արդարև իւր ժողովրդի, հպատակ ազգերի առաջ իւր վարկը, հեղինակութիւնը կորցրած մի կառավարութիւն, որին նոյն իսկ պետական ամենակարևոր ծախուց համար պակասում են նիւթական միջոցները, նա եթէ կամենայ և՝ դժուար թէ կարողանայ ինքը իւր ձեռքով բարւոքել իւր ժողովրդի, հպատակ ազգերի վիճակը: Եթէ Եւրոպան կամենում է ճշմարիտ խաղաղութիւնը պահպանել արևելքում, եթէ նա ցանկանում է, որ արևելքում քրիստոնեայ ազգերի արդար պահանջները իրագործուին, և որ աւելորդ ի զուր տեղը արիւն չթափուի, նա պէտք է Թիւրքիայի վերաբերմամբ պետութեան անկախութեան սկզբունքը մի կողմ դնէ: Եւրոպան պէտք է մի տեսակ հոգաբարձութիւն կազմէ Թիւրքիայի վերայ նոյն իսկ յօգուտ Թիւրքերի: Ոչ թէ նեղ քրիստոնէական կէտից, այլ ընդհանուր մարդասիրական կէտից պէտք է գործէ նա, այն ժամանակը միայն արևելքում կիշխէ արդարութիւնը: Ինչո՞ւ միայն քրիստոնեաներին օգնել, ինչո՞վ են մեղաւոր մահմետականները, միթէ նոքա մարդիկ չե՞ն, հոգի, սիրտ չունի՞ն, միթէ նոքա նոյնպէս նեղացած և զրկուած չե՞ն, միթէ նոքա աւելի ևս չե՞ն զգում իւրեանց վզին վատ կառավարութեան լուծը: Ո՞ր երկրի զօրքը այնչափ նեղութիւնների և զըրկանքների մէջ տանում է համբերութեամբ, անվրդով և քաջութեամբ պատերազմի ծանրութիւնը, ինչպէս տանում է այդ Թիւրք զօրքը: Թիւրք ժողովրդի վարմունքը քրիստոնեաների դէմ միթէ տգիտութիւնից չէ՞ առաջանում: Միթէ ժողովուրդը մեղաւոր է, որ նրանից ծանր հարկեր առնելով, պահում են նորան տգիտութեան խաւարի մէջ:—Ոչ, Եւրոպան միայն քրիստոնեաների համար հոգալով՝ անարդար վարուած կ՛լինէր և մի և նոյն ժամանակ գործը կիսատ կ՛մնար, իսկ քրիստոնեայ ազգերի բարեկեցութիւնը ժամանակաւոր, որովհետև դրացիների մէջ պէտք է որ հաշտութիւն լինի, եթէ կամենում ենք, որ խաղաղ ապրին և զարգանան...: Միակ և հաստատ ճանապարհը արևելեան խնդիրը լուծելու համար՝ մեծ պետութիւններից կազմած հոգաբարձութիւնն է Թիւրքիայի վերայ: Իսկ դորան հասնելու համար, հարկաւոր է, որ մեծ պետութիւնները իւրեանց եսական հաշիւները թողնեն արևելքի վերաբերմամբ և համաձայնուին միասին գործելու: Իսկ դորա համար հարկաւոր է, որ Եւրոպան սկզբունքով ընդունէ, որ արևելքը պատկանում է արևելցիներին:

Ս. Սպանդարեան

«ПОРЯДОКЪ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ.

«Порядокъ» լրագրի 36 համարում կարդում ենք հետևեալ թղթակցութիւնը Կ. Պօլսից:

«Ցաճկական փաշութեան անսաստ և ապականիչ ազդեցութիւնը այն աստիճանի կորստաբեր հետևանքներ է ունեցել հպատակ ազգերի մտաւոր կեանքի վերայ օսմանեան մայրաքաղաքում, որ առաջին անգամ այդ քաղաքական և հասարակային պղծութեան որջի մէջ լոկ իբրև ճամբորդ ընկնող մարդը մեծ փորձանքների է ենթարկվում: Այս օր դարձաք դէպի աջ և ծանօթացաք [illegible] մի ազնիւ մարդու հետ, միւս առաւօտ ձեզ մօտ կըգայ մէկը և անկեղծ ցաւակցութեան կերպարանքով կըզգուշացնէ, որ դուք մի շատ վտանգաւոր անձի հետ էք ծանօթացել: Մի օր կերթաք այցելութիւն անելու մի հասարակային հաստատութեան կամ մի նշանաւոր գործողի, և հէնց վաղը կտեսնէք, որ հարիւրաւոր աչքեր ձեր ամեն մի քայլը և արարմունքը դիտում են, կարծելով, որ դուք Ստամբոլ բնակող այս կամ այն դիպլոմաթիքական պաշտօնատարի արբանեակն էք: Եթէ մինչև անգամ լոկ զբօսանքի կերթաք և ձեր խօսակցի հետ փոքր ինչ բարձր ձայնով զրոյց սկսէք,—վստահ եղէք, որ անթիւ լսուն ականջներ ձեր ամեն մի բառը ագահութեամբ օդի միջից կըբռնեն և, Աստուած գիտէ, թէ ինչ մեկնութիւններ տալով նոցա, կըվազեն վաճառելու ում որ հարկն է մի քանի ոսկի շահուելու համար: Կաշառակերութիւն, ընդ-

---

նա ապահովուած, քո որ ուշադրութեամբ ու զոհաբերութեամբ հաստատված,—քո համակրութեամբ, որ թատրոնի դատարկութեան մէջ է երևում, ներկայացմանց մեծ մասի ժամանակ, քո եռանդովը դէպի նա, որ կուսակցական մանր զգացմունքներիդ մէջ է երևում դէպի անձնաւորութիւնք, քան դէպի բուն թատրոնի գոյութեան գաղափարը: Եթէ այսպէս տանես դու քո թատրոնի գործը, նրան մասնաւորների հոգացողութեան միայն թողնես, դու նրան կ՛փակես և ահա և մի այլ մեծ հասարակական յանցանք գործած կ՛լինես:

Ինչո՞վ պիտի այդ մեղքդ քաւես,—օտար թատրոնների և ցիրկերի վերայ հազարներ ծախսելով, քո սեպհական շահերդ ուրիշին զոհելով, քո աշխատաւորներիդ յուսահատեցնելո՞վ: Ո՛չ, դրանով դու յանցանքդ չես քաւիլ, սորա վերայ քեզ հարկաւոր է խորհիլ և մտածել—քո արժանաւորութիւնդ ճանաչել—գործով զղջումդ յայտնել և քո հասունութիւնդ ապացուցանել:

⁂

Թիֆլիզի հայ ժողովուրդ, գրականութիւն և մամուլ ունես դու ազգային. մէկ նայիր դու նորա վիճակին, ու ցոյց տուր չափը քո ճաշակին դէպի ամեն բան ազգային և մարդկային: Գրականութիւն ու մամուլ ոյժ և զարդ են զարգացած հասարակութեան—բայց հայ գրականութիւն ու մամուլ վկայ են Թիֆլիզի հայ հասարակութեան ամլութեան և զգացմանց աղքատութեան, իրանց խեղճութեամբ և անկատարելութեամբ:

Ինչո՞ւ:

Որովհետև տարին մի քանի գիրք են հրատարակվում և դարերի ընթացքում միայն ծախվում և տարածվում ու հեղինակի կամ թարգմանչի հոգին քաղում, ջանը մաշում և աշխատասիրութեան եռանդն ու խանդը մարում, հանգցնում: Միթէ յանցանք չէ՞ այս քո վարմունքը, որ սպանում ես անտարբերութեամբ քո մտաւոր կեանքը, անմշակ ես թողնում քո բարոյական անդաստանը, զրկում ես իսկական կեանքից քո գերդաստանը:

Մամուլիդ նայիր, ով հայ ժողովուրդ Թիֆլիզի, նորա վիճակին տեղեկացիր և մի՛ ամաչիր: Երկու լրագիր և մի օրագիր ունիս—քառասուն հազար ժողովուրդ ես, հարուստ ու փարթամ ես, բայց քեզնից 100—150 հոգի է միայն զգայուն դէպի իւր մամուլը, մնացած հազարներդ մտաւոր և բարոյական քնոյ անձնատուր՝ պտտում են ինչպէս կենդանի մեռելներ, կամ մեռած կենդանիներ, միայն զգայական կեանքի են սիրահար և բարոյականութեան մէջ բոլորովին ապիկար:

Թիֆլիզի հայ ժողովուրդ, ես մի քանի հաստատութիւնքդ միայն յիշեցի և նոցա անմխիթարելի վիճակը ցոյց տուի—բայց գիտես, թէ դու ինչե՛ր չունիս:

Ո՞ւր են քո հիւանդանոցներդ, ո՞ւր են քո անկելանոցներդ ու աղքատանոցներդ, ո՞ւր են քո բարեգործական ընկերութիւնքդ, հասարակական օգտաւէտ հաստատութիւնքդ, գործարաններդ ու արհեստանոցներդ.—դոցա բոլորի բացակայութիւնը քո մտաւոր և բարոյական ամլութեանդ է վկայ, քո հասարակական յանցանացդ է առհաւատչեայ: Ի՞նչպէս պիտի քաւես այդ մեղքերդ:—

Կարծում ես, թէ հերիք է, որ այս մեծ պասին մի շաբաթ եկեղեցի ման գաս, մոմ վառես ու արշինում մի մատ պակաս կտրես, կամ գնի մէջ մի քանի կոպէկ աւելորդ պահանջելդ խոստովանես և քո հաշիւդ այդպէս վերջացնես:—Ոչ, սխալվում ես դու ինքդ քեզ միայն դըրանով խաբում ես. բայց անձնախաբութիւնից շահ չ՛կայ, մասնաւոր յանցանքիդ հեշտ է թողութիւն, բայց հասարակական յանցանքն է աններելի—որ չունի թողութիւն: Մասնաւոր յանցանքդ ես քեզ և դու ինձ կարող ենք ներել—բայց հասարակական յանցանքի թողութիւնը միայն հասարակական բարեգործութեամբ կ՛քաւվի:

Թիֆլիզի հայ ժողովուրդ, եկեղեցիքդ բարեզարդեցէք ու յաճախեցէք, դպրոցներդ բարեկարգեցէք, ձեր թատրոնը ապահովեցէք, գրականութիւնն ու մամուլը պահպանեցէք և ծաղկեցրէք—ապա թէ ձեր խղճի հետ կը հաշտուէք: Իսկ մինչև որ այս հաշտութիւնը խղճի հետ չ՛լինի, ձեր ապաշխարանքն ոչինչ չ՛արժի և նրան բնաւ թողութիւն չի լինիլ: Որովհետև դուք, Թիֆլիզի հայ ժողովուրդ, սովոր էք աւելի մեծ պասին սթափ ու արթուն, եռանդոտ ու զգայուն լինել և ձեր հոգու վերայ խորհել—ես էլ այժմ այս քարոզները մատուցի ու ձեզ կարդացի, իսկ մեղքն ու վարձքը ձեր վզին թողի:

Բաղէյի.

հանուր լրտեսութիւն— ահա այն աչքի զարնող յատկանիշները, որք սեփական են մինչև անգամ այս տեղի հասարակախօսներին և կրթուածներին, ով և լինէին նոքա՝ յոյն, հայ, տաճիկ, թէ պոլսաբնակ եւրոպացի:

Աւասիկ տաճկի ախրապետութեան քայքայիչ ազդեցութիւնը և ահա միջազգային մեծ շահերի իբարու հետ ընդհարուելուն արգասիքը․․․ Յայտնի է, որ խոշոր ազգութիւններից Պօլսում առաւել նշանաւոր են յոյներն և հայերը: Յունաց անկախութեան հռչակուելու օրից սկսեալ էֆենդի կոչուող յոյն պաշտօնակալները իսպառ զրկուեցան իրանց հաւատարմութիւնից: Ուստի եթէ տաճիկ կառավարութեան մէջ գտնւում են տակաւին յոյներ, դոքա իրենց արիւնակիցների հետ ամեն մի ազգակցութեան և ազգայնութեան կապ կտրած յայտնի բնէաւթներ են: Այդպիսի են օրինակի համար, Կարաթեոդորին, Ֆօթիադէս բէյը և այլն: Բայց այդպէս չէր մինչև վերջին օրերս հայ պաշտօնատարների դրութիւնը: Որոշ քաղաքական և ազգային ձգտումներ չունենալով Հայերը դիւրաւ փոխարինեցին յոյներին, որք պետական ծառայութեան տեղ մի առաւել անկախ գործի հետամուտ եղան, այն է՝ վաճառականութեան: Ի բնէ փառամոլ և թեթևամիտ տաճկաբնակ Հայերը շատ շուտ հրապուրուեցան օսմանեան ոսկեհուռ նշանազգեստներից, և այդպիսով օսմանեան ծառայութեան մէջ բազմացան իրենց արքունի կոչմամբ յոյների առջև շփացող հայ էֆենդիներ, առանց ի միտ առնելու, որ նոցա հագած և նոյն իսկ հագուողների փողով կարուած մի քանի հարիւր ոսկեզարդ նշանազգեստների տակ օսմանեան տէրութիւնը ծածկում է նոցա միլիոնաւոր ազգակիցներին աղէտ․․․ տառապանքը:

Բայց այդ բաներին ներհակ մի շատ մխիթարական երևոյթ են կազմում տեղւոյս քրիստոնեայ կանայքը: Ապացոյցի համար կարող էի բազմաթիւ օրինակներ յառաջ բերել, սակայն կըյիշատակեմ միայն մին, և այն է մի բարձրաստիճան հայ պաշտօնակալ էֆենդիի և նորա կնոջ մէջ ծագած դառն երկպառակութիւնը այն պատճառով, որ էֆենդին, իր փաշա իշխանի օրինակին հետևելով, յօժարացել էր, անցեալ տարուայ վերջերում, ձեռք գնել օրգանիքական ստատուտի դէմ գրած բողոքագրի տակ, ստատուտի որ յօրինել էր Տաճկաստանի գաւառների համար եւրոպական կօմիսիան: Ես անձամբ ճանաչում եմ մի ուրիշ հայ տիկին, որ կտրեց բոլոր յարաբերութեան կապը իր եղբօր հետ, ըստ որում սա անձնուէր հաւատարմութեամբ կամեցել էր մնալ տաճկի պաշտօնատար և սուլթանի ծառայ:

Յոյները ի ձեռն առնելոյ մի առաւել ազատ վիճակի հասնելով և Տաճկաստանի մէջ քաղաքականապէս աւելի զարգացած ազգութիւն կազմելով, այժմ գործ են դնում ամեն մի պատեհ հանգամանք, դէպքերի քննութեան և գնահատութեան առաւել տհաս և անփորձներին խրատելու և խելքի բերելու համար: Իբրև օրինակ, ես այստեղ կդնեմ մի յոյն և մի հայ մարդու խօսակցութիւն այն խնդրի մասին, թէ ինչ նշանակութիւն կարող էր ունենալ հայոց և վրացի քրիստոնեաների հաւանաբար գարնան բռնկելու ընդհանուր իրարանցումը Տաճկաստանի հետ:

Յոյն: Աբրօ, արդեօք լսած ես, որ Տաճկաստանը մտադիր է այստեղից արտաքսել բոլոր յոյներին, եթէ Յունաստանի հետ պատերազմ ծագի:

Հայը: Միթէ դա մի նոր բան է: Միայն թէ ես կըցանկայի գիտենալ, թէ ինչ կլինի այն ժամանակ հայերիս վիճակը, որ միակ աւելի գեաւուր ազգ պիտի մնանք տաճիկների աչքում: Այն ժամանակ մենք ևս մեր գաւառաբնակ ազգայինների յոռի դրութեան մէջ կընկնենք:

Յոյն: Եւ Աստուած տայ, որ այդպէս լինի, այն ժամանակ դուք ևս խելքի կ'գաք, ինչ որ ունիք չունիք կըհաւաքէք և կերթաք ձեր հայրենի երկիրը, որի մասին միշտ հառաչում էք, Ստամբոլի զուարճանքը վայելելով: Չէ՛, Աբրօ, այդ կերպիւ կարելի չէ սիրել հայրենիքը…

Հայը: Իրաւ է ասածդ, բայց դու մոռանում ես, որ մենք միանգամայն ուրիշ պայմանների մէջ ենք, քան թէ յոյներդ: Դուք արդէն ունիք անկախութիւն և այժմ միայն շռայլութեան ետևէ ընկած էք, այսինքն անկախութիւնը զօրացնելու ետևէ, մինչդեռ մենք ոչինչ չունինք, և մեր ջանքն է ստանալ տաճկից մի որ և է ինքնավարութիւն, որ կարելի է ձեռք բերել և առանց զէնքի դիմելու, լոկ Եւրոպայի բարոյական ճնշմամբ Տաճկաստանի վերայ:

Յոյն: Հըմ. հենց այդ է, որ դուք դեռ չէք ճանաչել լաւ Տաճկաստանը. դուք, հայերդ կարծում էք, թէ նա կըզգաստանայ, երբ վերստին նորանից երկիրներ խլեն: Թէկուզ նորա եղունգները խլեցէք, այնուամենայնիւ նա ոչինչ չի տալ ձեզ յօժար կամքով. միթէ նորան քիչ խրատեցին, բայց երբ տեսանք, որ նա խղճի և բանականութեան պահանջներին ունկն տար: Դուք ենթադրում էք, որ Յունաստանի հետ իր հաշիւները կնքելուց յետոյ, փոքր-ասիական հայերի վերայ ուշադրութիւն կըդարձնէ՞: Ո՛չ հազար անգամ ոչ: Մեզնից ազատուի թէ չէ, նորա գլխաւոր նպատակը կլինի իսպառ բնաջինջ անել ձեզ, այն ամեն միջոցներով, որոց մէջ նա այնպէս հնարագէտ է: Եւ ի՞նչ կանէք դուք այն ժամանակ: Դարձեա՞լ կըբողոքէք: Սակայն ի՞նչ կշիռ ունեն այդ բողոքները: Ահա Բոսնիան և Հերցեգովինիան քանիցս անգամ բողոքաւոր եղան Աւստրիայի գործած բռնութեան դէմ, բայց ով ականջ դրաւ նոցա: Եւրոպան ձանձրացել է այդ ամեն բողոքներից: Չէ՛, Աբրօ, ձեզ մի բան միայն կըմնայ անել— մեզ հետ միասին դիմել առաւել նպատակի յարմար միջոցների, որոնցից կախուած է ձեր փրկութիւնը և ապագան…

Հայը: Բայց ինչպէս, երբ մեր ազգը գրեթէ անզէն է, և որ և է տեղից զէնք բերելու հնար չկայ: Տաճկաստանը այժմ առաւել խիստ է վերահսկում մեր վրայ, քան որ և իցէ միւս ազգի վերայ:

Յոյնը: Հապա Ռուսաստա՞նը, Կովկասը:

Հայը: Ոչ, այդ միջազգային կանոններին հակառակ կլինի, այդ բանը Ռուսաստանը թոյլ չի տալ:

Յոյնը: Ի՞նչ միջազգային կանոն պահպանած ունի երբեք Տաճկաստանը Ռուսիոյ վերաբերմամբ, որ սա էլ նոյն հարկը նրան վճարէր: Միթէ չես յիշում այն սարսափելի յուզմունքը, որ 1866 թ. Տաճկաստանը պատճառել էր իր հպատակ հայերին, գիտակցաբար լուր տարածելով, թէ ռուսը շղթայել ու բանտարկել է ձեր վեհափառ Կաթողիկոսին: Միթէ Տաճկաստանը չգիտէ՞ր Ռուսիոյ դէմ յարուցած այդ գայթակղութեան (скандалъ) նշանակութիւնը, մինչ նա գրգռում էր երկու միլիոնաւոր մի ազգ իր դրացիի դէմ, որի մօտ հայերը աւելի բարւոք վիճակի մէջ են:

Հայը: Այո, այդ ճշմարիտ է: Տեսնենք, Աստուած ինչ կըտայ:

Յոյնը: Յուսամ առ Աստուած, բայց ինքդ էլ արթուն կաց, գարունը հեռու չէ…»:

Այդպէս է վերջանում ռուս Թղթակցի յառաջ բերած խօսակցութիւնը հայի և յոյնի մէջ:

Տրանսվալում (հարաւային Աֆրիկա) բօյէրների (հոլանդացի գաղթականներ) անգլիացի զօրքի դէմ տարած յաղթութեան մասին գրում են փետրվարի 28-ին Լոնդոնից «Kölnische Zeitung» գերմանական լրագրին.—Գեներալ Կօլլէյն շաբաթ օրը փետրվարի 26-ին, 20 սպաներով և 627 զինուորներով գրաւեց բօյէրներից անպաշտպան թողած Մախուա լեառը, որը, ինչպէս երևում է, սպառնում էր բօյէրների դրութեան: Միւս օրը երբ բօյէրները նկատեցին այդ, բաց արին կրակը վայրից վեր: Սկզբում նոքա յաջողութիւն չունեցան, այնպէս որ Կօլլէյն 11 ժամին մօտ թւում էր իբրև թէ յարձակուողները յետ են քաշվում: Բայց յարձակումը շարունակուեցաւ աւելի մեծ եռանդով, և անգլիացիները, իբրև թէ նոցա պատերազմական մթերքը պակասեցաւ, մօտ $2^1/_2$ ժամին կէսօրից յետոյ յետ մղուեցան իրանց բռնած դիրքից նշանաւոր կորստով: Ընկածների թւում, ինչպէս խօսվում է, պէտք է հաշուել և գեներալ Կօլլէյին:

⁂

25-ին փետրվարի Պօլսում փոքր-Ասիայից ստացած լուրերին նայելով Գաւրան գաւառի լեռներում դրուզները ապստամբել են և այդ նոր ապստամբութիւնը սկիզբն առել է նորանով, որ դրուզները յարձակվել են գիւղերը մի քանի տեղերի վերայ և սպանում են բնակիչներից 70 մարդ քրիստոնեայ և մահմետական: Այս վայրենութիւնը ստիպել է Դամասկոսի վալիին հաւաքելու զօրք նոցա դէմ:

⁂

Անգլիայի պատգամաւորների ժողովում 28-ին փետրվարի սըր Չարլզ Դիլկը մի քանի հարցմունքների պատասխանելով, յայտնեց, որ Անգլիան և Ֆրանսիան համաձայնուել են միջամտելու Պերուի և Չիլիի (Ամերիկայում) պատերազմներում հաշտեցնելու նպատակով, եթէ Չիլիի հասարակապետութիւնը իւր համաձայնութիւնը տայ այդ բանին: Անգլիան համաձայն է Ֆրանսիայի առաջարկութեան հետ, պատրաստ է հեռացնելու իւր կարգադրութիւնը Պերուում և Չիլիում իւր ներկայացուցիչներին, իսկոյն երբ համաձայն կարգադրութիւնը կ'յօրինուի իւր և Ֆրանսիայի մէջ:

«ՄԵՂՈՒԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ).

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26-ին փետրվարի: Կ. Պօլսի դեսպանները միաձայն ընդունել են Գօշէնի և Հայֆէլդի կարծիքն, որով պէտք է բաւականանան ընդունելով տաճկական առաջարկութիւններն առանց քննութեան և նրանց իրանց կառավարութեանց հաղորդելու:

Կ. ՊՕԼԻՍ, 25-ին փետրվարի: Բ. Դուռը հրամանագրել է պահապանների կըրկնաշարքով շրջապատել այն տեղերն, ուր երևացել է ժանտախտ (չումա), այրել բոլոր վարակված քաղաքներն ու գիւղերը:

ԴՈՒԲԼԻՆ: Արդէն 18 հոգի բանտարկված են, սոցանից մէկը՝ Բոյտոնը համարվում է գլխաւոր կազմողը հողային դաշնակցութեան:

Քութայիսի բանկի գրաւական թղթերի ընթացքն է 90 ռ. 25 կոպ.:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Խարկովից գրում են «Голосъ» լրագրին.—Իմ հեռագրից դուք արդէն իմացել էք գիմնազիստ Շուլցի անձնասպանութիւնը: Այսօր «Южный Край» լրագրումը տպուած է անձնասպանի նամակը փետրվարի 10-ից: Այս նամակը շատ հետաքրքիր է. հաղորդում եմ նրա էութիւնը:

«Բոլորի շուրջը կեղծաւորութիւն է, խաբէբայութիւն և ամենակատարեալ անզգայութիւն: Մեր ուսումնարանում ձեւապաշտութեան հետ միասին թագաւորում է և ճնշահարութիւնը: Ուշադրութիւն դարձրէք, օրինակ՝ գիմնազիոնի ներկայացուցչի վերայ, որ ճարպիկութեամբ գիտէ իւր մէջքը իշխանութեան առջև կռացնել և ստորադրեալներին ճնշահարել: Նախկին հոգաբարձուն նրա մասին կարծիք յայտնեց՝ թէ նա ուսումնական մարդ է, օրինակելի կառավարիչ, որ և ունի երևելի վարչական ընդունակութիւն: Միթէ կարելի է վարչական ընդունակութիւն տեսնել այս բանի մէջ, որ նա շատացրեց վերակացուների թիւը և սակաւացրեց աշակերտաց թիւը ու տնտեսական մասի համար էլ այնպիսի ուսուցիչներ ժողովեց, որոնք առանց կարդալու՝ հաշիւների տակը ստորագրում են:

«Ինքներդ դատեցէք: Ի՞նչ է մեզ տալիս ուսումնարանը: Նրա մէջ չկայ մի անձն, որ ուղղէր մեզ և հաշտեցնէր կեանքի հետ: Ով իւր մէջ զգում է անպէտքականութիւն՝ անձնասպան է դառնում: Այդ տեսակ անհատի միակ հաշտեցուցիչ, միակ ազատիչը՝ ուսումնարանը միայն կարող է լինել, բայց խոհական, մարդասէր ուսումնարանը. իսկ այժմեան ուսումնարանը հենց ինքն է դէպի անձնասպանութիւն մղում: Եւ յիրաւի—ինչ մի բարի և բարոյական բան եմ դուրս բերել ուսումնարանից, ես, որ երեք ամսից յետոյ ըստ իրաւանց՝ ստանում եմ հասունութեան վկայական: Ուղիղ կպատասխանեմ— ոչինչ բարի, այլ շատ չար բաներ»:

Այս նամակի մէջ խօսում է և դաստիարակութեան եղանակի վերայ, ուր ներկայանում է մի քանի ուսուցչաց առանձնայատկութեանց նկարագիրը: Ըստ երևոյթին նամակը վերջացրած չէ:

⁂

Առաջին հանդէսը, որ այս տարի տուեց Ֆրանսիական հասարակապետութեան նախագահը Եղիսեան ապարանքում փետրվարի 24-ին՝ տարապայման փառաւոր էր: Հրաւիրեալների թիւը համնում էր մինչև 8000 հոգու: Նախագահ Գրէվին ֆրակով էր և առանց լեգէոնի պատուանշանի: Հանդէսին ներկայ էին դեսպանական ներկայացուցիչները, ամբողջ պաշտօնական աշխարհը, որոց թւում շատ զօրապետներ և ուրիշ շատ նշանաւոր անձինք բացի Գամբէտտայից:

⁂

Փարիզից հաղորդում են, որ փետրվարի 27-ին Փարիզը հանդիսաւոր կերպով տօնեց Վիկտոր—Հիւգօյի ծննդեան 80 ամեայ յոբելեանը: Բազմաթիւ պատգամաւորներ ծաղիկներով և պսակներով ղրկուած այլ և այլ քաղաքներից, ուսումնարաններից, լիցէյներից, կօլլէժներից, ուսումնական և գրականական ընկերութիւններից, թատրոններից, բէլգիական լրագրներից, արհեստաւորաց դաշնակցութիւններից, Փարիզու քաղաքային խորհրդատնից, զօրաց զանազան բաժիններից, 104 երաժշտական ընկերութիւններից, անթիւ և խուռն ժողովուրդներ գեղացնում էին փողոցը մեծ հասարակապետական բանաստեղծի տան առաջ: Կարգապահութիւնը օրինակելի էր. չնայելով ոստիկանութեան կատարեալ բացակայութեանը: Պատգամաւորները անցնում էին երաժշտական ընկերութեանց օրկեստրների միջով տան առջև: «Gaîté» թատրոնը լուսաւորուած էր և ծաղիկներով չքեղազարդած. տալիս էին Լուկրեսիա:

⁂

Սերպուխովից հաղորդում են «Русскій Курьеръ»-ին: Օրերումս 8 զինուոր, որոնք կենում են Սերպուխովում, արտիլերիակի բրիգադում՝ բռնել են մի աղջիկ, որ անց էր կենում զօրանոցի մօտով, բռնաբարել են նրան, քարշ են տուել դէպի զօրանոցները՝ աւելի մեծ ընկերակցութեամբ բռնաբարութիւնը շարունակելու համար, յետոյ երբ նա բոլորովին անզգայ է եղել՝ առել են և ցանկի վրայից փողոց դուրս գցել: Այս պատահել է երեկոյեան 10 ժամին ուղիղ պահապան օֆիցէրի բացակայութեան ժամանակ: Գիշերային պահապանը վերցնում է աղջկան և տանում հիւանդանոց: Միւս օրը բերին նրան քննութեան համար զօրանոցները, որտեղ նա ցոյց տուաւ 8 յանցաւորների վրայ, որոնք կալանաւորուած ուղարկուեցան Մոսկվայի զինուորական դատարանը:

⁂

Յառաջիկայ երկուշաբթի, մարտի 2-ից սկսվում է հայ-թատերական երկրորդ շրջանը: Առաջին անցած շրջանում թատրոնական մասնաժողովը իւր անխոնջ գործունէութեամբ հայ-բեմի համար՝ ծանօթացրեց հայ-հասարակութեան եւրոպական և ռուսաց կեանքի նշանաւոր դրամաների և ողբերգութեանց ու կատակերգութեանց հետ: Այս երկրորդ շրջանը ևս, յոյս ունենք, որ բեմ դուրս կբերէ ուրիշ պիէսաներ, որոնք աւելի մօտ կլինեն հայ ժողովրդական կեանքին: Այդ երեկոյ պիտի խաղացուի յօգուտ օր. Աստղիկի երևելի դրամա «Բոյր թէբէզայ» հինգ գործողութեամբ, թարգմ. պ. Աւալեանի: Փափաքելի է, որ հայ հասարակութիւնը այս երկրորդ շրջանում չզլանայ իւր երթևեկութեամբ պաշտպանութիւն ցոյց տալու հայ թատրոնի նիւթական գոյութեան և նորա զարգացման:

Խմբագիր Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ:
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ» կառավարութեան ծրագիրը քննելու համար կ'կայանայ հինգերորդ ժողով, ս. Արծրունու թատրոնում, մարտի 1-ին, կիւրակի առաւօտեան ժամի 11-ին:

Եթէ այս նիստը վերջինը լինի, կ'ընտրուին ներկայացուցիչներ ընկերութեան ծրագրի հաստատութիւնը կառավարութիւնից ստանալու համար:

ГРОМАДНЫЙ ВЫБОРЪ КРОВАТЕЙ

подносовъ замковъ, перьевъ, бумаги, ружьей, револьверовъ, стакановъ, цитрать-магнезіи, конфектъ, варенья и пр. *въ Англійскомъ магазинѣ.*

Тамъ-же: РАСПРОДАЖА пальто отъ 12 р., брюки отъ 4 р., трико отъ 70 к. арш., тарелки отъ 12 к. шт. кяхтинскій чай весенняго сбора прямо отъ плантаторовъ отъ 1 р. 5 к. до (самый лучшій) 2 р. за фунтъ безъ бумаги. вареннье за ф. 85 к. 1750 12—3.

ԵՂԲ. ԱՐՈՒԼԵԱՆՑՆԵՐԻ

ԽԱՆՈՒԹԸ

տեղափոխուեցաւ կամրջի վերայից Մաղաթեան փողոց, Աղէքսանդրեան այգւոյ հանդէպը, գէն. Օրբելեանի տան մօտ, սեպհական տունը № 11 և 2: 1—5

ՔՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ

Գիրքը լոյս տեսաւ և վաճառվում է Տփխիսի բոլոր հայ-գրավաճառներում և առ այժմ հետևեալ գաւառական քաղաքներում — Ղզլարում, Շուշում, Ախալքալաքում, Զաքաթալում, Գանձակում, Երևանում, և ինձ մօտ. հասցէն. Тифлисъ. Учителю Александру Араратьянцъ, фоминная улица № 15, д. Гр. Давришова. Ամէն տեղ գինը 40 կոպ. է, գումարով առնողներին զեղջում կ'լինի:

Աղէք. Արարատեանց.

ԹԻՖԼԻԶԻ քաղաքային վարչութիւնը հաղորդում է հասարակաց գիտութեան, որ նորա տանում 10-ին առաջիկայ մարտի նշանակած է աճրդախօսութիւն, առանց կրկնաճրդախօսութեան կապալով տալու համար Նաւթլուխի քաղաքային գետինը, որ յարմարաւոր արօտատեղի է, 194 դեսեատին և 100 քառակուսի սաժէն տարածութեամբ, ապրիլի 1-ից ներկայ ամի մինչև ց1-ն յունվարի 1884 թուականի: Այս առարկայի մասին պայմանները ցանկացողք կարող են տեսնել վարչութեան տանում, ամէն օր 10 ժամից մինչև 2-ը կէսօրից յետ, բացի կիւրակի և տօն օրերից:

ՍՏԱՑՎԱԾ Է Կ. Պօլսից խակական, բնական **ԱՆՈՒՇԱՀՈՏ ԾԽԱԽՈՏ** ամէն տեսակի **ԿԵՕԲԷԿ** և **ՍԱՄՍՕՆ** զանազան գների, **ԱՋԱՐԵԱՆՑԻ** Վարրիկոյից: Խնդրում եմ ցանկացողներին դիմել Գօլօվինսկի պրօսպեկտ, Շիօշվիլի տունը մագազինը № 10: 1—5

Արդէն մամուլի տակ է և շուտով լոյս կ'տեսնի նոր և աւելի գեղեցիկ տառերով տպագրված

«ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ»

Ազգային խոկատար երգարանի առաջին հատորը, երկրորդ տպագրութեամբ, փոփոխած:

—

Սորա մէջ տպագրվում են, բացի հատընտիր բանաստեղծութիւններից և ժողովրդականութիւն ստացած երգերից, նոյնպէս նոր և դեռ չը տպագրված երգեր և բանաստեղծութիւններ: Բացի դոցանից տպագրվում են և պատ գրուածներ— прозы, որոնց ընդհանուր թիւը հասնում է մօտ 300-ի: Իւրաքանչիւր գրքի գինն է, կանխիկ բաժանորդագրվողների համար, 1 րուբլ:

Օտարաքաղաքացի ցանկացողները կարող են, քանի մի անձինք միասին և կամ առանձնապէս, դառնալ Բագու, «Սոխակի» հրատարակչին, հետևեալ հասցէով. Аваку Григоріанцъ, Въ Баку.

«ՎԷՆԵՐԵԱՆ ԱԽՏԵՐ» գրքոյկը բժշկապետ Քուչարեանցի ծախվում է Արամեանցների խանութում, Աղէքսանդրեան այգու հանդէպ: գինն է 25 կոպէկ. իսկ աւել թւով առնողներին տրվում է ցած գնով. 1—5

ԹԻՖԼԻԶԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ. Դուրս եկաւ մամուլի տակից Մովսիսի Խորենացւոյ **ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ.** գինն է 80 կ.

ԿԻՒՐԱԿԻ ՄԱՐՏԻ 1-ին 1881 թ.

Տիկին Պավլովսկայան տալու է կոնցերտ Թիֆլիզի ժողովարանի դահլիճում մասնակցութեամբ օրիորդ Գարաքաշեանի, պ. պ. Բասելի և Պավլովսկիի, յօգուտ տեղական ուսանողների և Թիֆլիզի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան:

Տոմսակներ կարելի է ստանալ, Լանկոյի մագազինում, պ. Ծատուրեանի լամպաների խանութում և ժողովարանի դռնապանի մօտ: Սկիզբն է 8 ժամին երեկոյեան:

ՆՈՐ ՏՊԱՐԱՆ
ՄՈՎՍԷՍ ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.

ԳԱՆՈՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ՑՈՒՆ ԻՇԽ. ԲԷՀԲՈՒԹՈՎԻ

Այս օրերս բանալով Թիֆլիզում լիակատար տպարան իւր ամեն պարագայիւքը, ընդունում եմ տպելու ամեն լեզուով և ամեն տեսակ պատուէրներ. այն է գրքեր, լրագրեր, ամսագրեր, բլանկներ, հաշուացուցակներ, հաշուատետրակներ, ատմասկներ, չայի և ծխախոտի ետիկետներ (զանազան գոյներով) են:

Տպագրութեան մաքրութիւնը և պատրաստական կանոնների ճշտութիւնը իբրև մասնագէտ պատասխանատու եմ լինում միշտ: Պատուէրները կը կատարուին կարճ միջոցում և համեմատաբար աւելի մատչելի գներով: 5—5

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Դուրս եկաւ և ծախվում է Կենտրոնական և ուրիշ գրավաճառանոցներում Մօրիս-Բլօքի «ՓՈՔՐԻԿ ՁԵՌՆԱՐԿ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ», թարգմանեց զանազան փոփոխութիւններով Ս. Պալասանեանց: Գինն է 50 կոպ. 3—6

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՏՈԿՈՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿ.

փետրվարի 1-ից մինչև նոր կարգադրութիւն.

վճարում է.

1. ընթացիկ հաշւով.
   - ա. հասարակ . 4%
   - բ. Պայմանաւոր 4½%
2. Գումարների աւանդ.
   - ա. Մինչև ցպահանջ 4%
   - բ. 6 ամսով . 5½%
   - գ. Մի տարով . 6%
   - դ. Երկու տարով և աւելի 6%

վերցնում է.

1. Զեղջումն առևտրական մուրհակների 6 ամսով . . 8%
2. Զեղջումն մուրհակների, ապահովութեամբ անշարժ կալից . 8%
3. Արժէթղթերի գրաւականով ընդունելիք պետական բանկայից 6 ամսով . 7½%
4. Մասնաւոր ընթացիկ հաշիւ.
   - ա. Ապահոված տոկոսաբեր թղթերով 8%
   - բ. Մուրհակներով ապահովացրած երկու բարորագրութեամբ 8½%
5. Զեղջումն կտրօնքների և թղթադրամների . . 8%

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՆ

վճարում է.

1. Ընթացիկ հաշւով 4%
2. մինչև ցպահանջ աւանդի . . . 4%
3. 6 ամսական աւանդի 5%
4. Երկու և աւելի տարով աւանդի . 6%

վերցնում է.

1. Զեղջումն առևտրական մուրհակների մինչև 6 ամիս 8½%
2. Արժէթղթերի գրաւականով.
   - ա. Ընդունելիք պետական բանկայից 7½%
   - բ. Անընդունելիք պետական բանկայից 8½%
3. Մասնաւոր ընթացիկ հաշիւներ
   - ա. Ապահովացրած արժէթղթերով . 8%
   - բ. Ապահովացրած մուրհակներով . 9%

Յանձնարարութիւններ 1/16% —2%.

ՓՈԹԻ—ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ.

Թիֆլիսից դէպի Փօթի դուրս է գնում.

	Ժամեր.			Տեղերի գինը.		
	առաւ.	կէս օր.	երեկ.	I կլ.	II կլ.	III կլ.
				ռ. կ.	ռ. կ.	ռ. կ.
Թիֆլիզ.	9. 21	12. 56	5. 18			
Մցխէթ	10. 11	1. 57	6. 27	1. 13	85	44
Գօրի .	11. 58	4. 35	9. 43	4.	3.	1. 53
Միխայլ.	1. 29	6. 15	11. 57	6. 30	4. 73	2. 42
		գիշեր				
Րիօն .	6. 56	1. 45		11. 25	8. 44	4. 31
Փօթի .				16. 31	12. 24	6. 26

Փօթիից դէպի Թիֆլիզ.

	Ժամեր.			Տեղերի գինը.		
	Առաւ.	երեկոյ.	գիշեր.	I կլ.	II կլ.	III կլ.
				ռ. կ.	ռ. կ.	ռ. կ.
Փօթի .	9. 3	10. 22				
Րիօն .	12. 13	3. 30		5. 13	3. 84	1. 97
Միխայլ.	5. 39	10. 1	1. 37	10. 1	7. 51	3. 84
		կէսօր.				
Գօրի .	7. 5	12. 20	4. 8	12. 33	9. 24	4. 73
Մցխէթ	8. 50	3.	7. 59	15. 19	11. 39	5. 82
Թիֆլիս				16. 31	12. 24	6. 26

Առաջին գնացքը Թիֆլիզ հասնում է 9 ժ. 31 ր. առաւօտեան, երկրորդը 3 ժ. 51 ր. կէսօրից յետ և երրորդը 7 ժ. 56 ր. առաւօտեան:

ՉԵՆ ՀԱՍՑՐԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

26 փետրվարի.

Ադամեչ Խամբատովին, Միխայլ Ռեփնիկովին, գեներալ Դ. ևլաս Կոնչավէլին, Նիկոլայ Ջալալովին Արքնեանկոյին:

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Կուկիայում, Մինէօնովսկի փողոցի վրայ, Համբերդեանի տանը:

Հիւանդներին ընդունում են ամեն օր, նաև տօն օրերին առաւօտեան ժամի 9—11. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—խիրուրգիական և վեներական (սիֆիլիտական) հ., ԲՈՒԴԿՕՎՍԿԻ — կանանց և ներքին հ., ժամի 11—1., ԼՈՒՆԿԵՎԻՉ—աչքերի, կաշուի և վեներական հ., ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ—ներքին հ. ժամի 5—7. ՊԱՎԼՕՎՍԿԻ—ջղային, հոգեկան և ներքին հ., ՈՒՇԱԿՈՎ—երեխայոց հ., ԾԱՂԿԱՀԱՏՈՒԹԻՒՆ առաւօտեան ժամի 9_11, չորեքշաբթի և շաբաթ օրերը երեկոյեան ժամի 7—8 ընդհանուր ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ: Հիւանդանոցը ունի գիշերապահ բժիշկ և ընդունում է ԳԻՇԵՐՕԹԻԿ հիւանդներ:

ԱՂՔԱՏՆԵՐԻՆ անվարձ է բժշկական խորհուրդը և դեղը:

Հիւանդանոցում բնակվում է բժիշկ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԸ:

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը սկըսվում է ժամը 9-ին և շարունակվում է մինչև 1 կէսօրից յետ:

Երկուշաբթի.— Գավրոնսկի մանկաբարձական և կանանց հիւանդութեանց համար,. Գորալէվիչ և Լիսիցեվ ներքին հ., Ռօտինեանց կանանց և երեխայոց հ., Բաքայեան ջղային և ներքին հ., Շանմբօրսկի վեներական և կաշուի հ., Քիւչարեանց 1-ն խիրուրգիական և աչքի հ.:

Երեքշաբթի.—Մինկէվիչ խիրուրգիական հ., Բէյխ աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխայոց հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Պետրովսկի վեներական հ.:

Չորեքշաբթի.— Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Քիւչարեանց 2-դ և Շանմբօրսկի սիֆիլիտիքական և կաշուի հ.:

Հինգշաբթի.— Գավրօնսկի մանկաբարձական և կանանց հ., Բէյխ աչքի հ., Ռօտինեանց կանանց և երեխայոց հ., Բաքայեան ջղային և էլեկտրականութեամբ բժշկելի հ. (электротерапия), Լիսիցեվ և Պետրովսկի ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական հ.:

Ուրբաթ.—Մինկէվիչ խիրուրգիական հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխայոց հ., Կրասնօգլեադով Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Շանմբօրսկի վեներական և կաշուի:

Շաբաթ. — Լիսիցեվ ներքին հ., Բէյխ աչքի հ., Բաքայեան ջղային և ներքին հ., Քիւչարեանց 2-դ կանանց և ներքին հ., Պետրովսկի վեներական հ.:

Օբրէխտ ատամի հ. ընդունում է իր մօտ խեղճ հիւանդներին ամենայն ժամանակ բժշկանոցի տոմսակով:

Դիրեկտոր բժշկանոցի բժ. Լիսիցեվ:

ՓՈՍՏ

Թիֆլիզի փոստի կառավարութեան մէջ ընդունվում են և տըրվում, ամեն պարզ և ամեն տեսակ թէ՛ նամակներ, թէ՛ լրագրներ և թէ՛ ծանր փոստի իրեր, ամենայն օր, բացի տօն օրերը, առաւօտեան 8 ժամից մինչև 1 կէսօրից յետ: Բացի դրանից ամեն օր, բացի կիւրակէ և տօն օրերը, առաւօտեան ժամը 7-ից մինչև 8 և 3-ից մինչև 7-ը կէսօրից յետ, իսկ կիւրակէ և տօն օրերը 7 ժամից մինչև 10 առաւօտեան և 3-ից մինչև 7 կէսօրից յետ, ընդունվում են և տըրվում հասարակ նամակներ:

Ռուսաստանի և արտասահմանի փոստը դուրս է գնում Թիֆլիզից ամեն օր բացի կիւրակէ և տօն օրերը, Փօթիի տրակտը (երկաթուղու միջոցով) ամեն օր, Երևանեան կարսինը երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ, Նուխունը և Կախեթինը կիւրակէ և չորեքշաբթի, Բագուինը, Ելիսաւետօպոլի վերայով երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Նամակներ.

Քաղաքային փոստով նամակն արժէ 3 կ.:

Բաց նամակ օտար քաղաքներ. 3 կոպ.:

Ռուսաստանի և Եւրոպայի բոլոր երկիրները ծածկուած նամակը արժէ (1⅙ լոտի ծանրութեամբ) 7 կ.:

Պատուիրած նամակների գինը կրկնակի է:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 27-го ФЕВРАЛЯ 1881 г. Типографія Амб. Энфіаджянць К-

Տէր բժշկապետ Մ. Ռոստոմեանց.